

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
«ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՄՈՆԻԹՐԻՆԳԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ կազմակերպություն) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպություն է, որը գործում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և այլ օրենքների ու նորմատիվ իրավական ակտերի հիման վրա, ինչպես նաև սույն կանոնադրությամբ:
2. Կազմակերպությունը ստեղծվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 15-ի N 1277-Ն որոշմամբ՝ «Թափոնների ուսումնասիրության կենտրոն (պետական գրանցման համարը՝ 273.210.04072), «Հիդրոերկրաբանական մոնիթորինգի կենտրոն» (պետական գրանցման համարը՝ 264.210.07447), «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն» (պետական գրանցման համարը՝ 264.210.06367) և «Տեղեկատվական-վերլուծական կենտրոն» (պետական գրանցման համարը՝ 286.210.04920) պետական ոչ առևտրային կազմակերպությունների միաձուլման արդյունքում և հանդիսանում է դրանց իրավահաջորդը՝ համաձայն փոխանցման ակտերի:
3. Կազմակերպության հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության (այսուհետ՝ հիմնադիր):
4. Կազմակերպության կանոնադրությունը դրա հիմնադիր փաստաթուղթն է:
5. Կազմակերպությունն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և կազմակերպության հայերեն, ռուսերեն և անգլերեն անվանմամբ կլոր կնիք, դրոշմակնիք, կարող է ունենալ ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:
6. Կազմակերպության անվանումն է՝

- 1) հայերեն լրիվ «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն,
- 2) հայերեն կրճատ՝ «ՇՄՄՏԿ» ՊՈԱԿ,
- 3) ռուսերեն լրիվ՝ Государственная некоммерческая организация «Центр мониторинга окружающей среды и информации»,
- 4) ռուսերեն կրճատ՝ ГНО «ЦМОСИ» ,
- 5) անգլերեն լրիվ՝ «Environmental Monitoring and Information Center» State Non-Commercial Organization
- 6) անգլերեն կրճատ՝ «EMIC» SNCO
7. Կազմակերպության գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Չարենցի 46.

II. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

8. «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության գործունեության հիմնական առարկան և նպատակներն են՝
 - 1) շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների պահպանության բարձր մակարդակի ապահովմանը նպաստելը՝ շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների (բացառությամբ օգտակար հանածոների պաշարների) նկատմամբ դիտարկումների իրականացման, վիճակի գնահատման վերաբերյալ բավարար տվյալների ստեղծման, դրանց գրանցման, վերլուծման, տրամադրման ու պահման միջոցով.
 - 2) շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վիճակի մասին տեղեկատվությունը բնապահպանական միասնական տեղեկատվական շտեմարանում ներբեռնումն ու շտեմարանի վարումը.
 - 3) թափոնների գոյացման, վերամշակման ու օգտահանման օբյեկտների և հեռացման վայրերի ու թափոնների դասակարգչի կազմման համար ուսումնասիրության իրականացումը, ինչպես նաև թափոնների օգտագործման ու վնասագերծման սակավաթափոն և անթափոն տեխնոլոգիաների մասին տվյալների հավաքումն ու վերլուծումը.
 - 4) շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների առանձին բաղադրիչների մասին տվյալների հավաքագրման ու վերլուծության հիման վրա համապատասխան համակարգչային շտեմարանների (բազա) ստեղծումը և վարումը, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պետական մարմիններին, հասարակական կազմակերպություններին ու հասարակությանն այդ շտեմարաններում պարունակվող տեղեկությունների տրամադրումը և ստացումը:
9. «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության խնդիրներն են՝
 - 1) պլանավորված ու միասնական ցուցանիշների կիրառմամբ դիտարկումների իրականացումը,

- 2) բնածին և մարդածին ազդեցությունների հետևանքով շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վիճակի փոփոխությունների բացահայտումն ու կանխատեսումը,
- 3) շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վիճակի որակի ու քանակի վերաբերյալ բնութագրական համադրելի տեղեկատվության ստացումը, վերլուծությունը, ամփոփումը ու տրամադրումը,
- 4) մթնոլորտային օդի աղտոտվածության, մթնոլորտային օդի վրա ֆիզիկական ներգործությունների, մթնոլորտում տեղի ունեցող բնական երևույթների, ինչպես նաև կլիմայի փոփոխությունների, օզոնային շերտը քայքայող նյութերի և մարդածին այլ ազդեցությունների և երևույթների դիտարկումների իրականացումը,
- 5) մակերևութային ու ստորերկրյա ջրային ռեսուրսների, ջրաէկոհամակարգերի, ջրային ռեսուրսների ծախսի, որակական ու քանակական հատկությունների, բաղադրության, քիմիական ու ռադիոակտիվ նյութերով և թափոններով աղտոտվածության, ինչպես նաև ջրային ռեսուրսների վիճակը վատթարացնող այլ ազդեցությունների ու երևույթների նկատմամբ դիտարկումների և ուսումնասիրությունների իրականացումը,
- 6) հողերի աղտոտվածության վիճակի ու որակական փոփոխությունների և հողերի վրա այլ բացասական ազդեցությունների ու երևույթների նկատմամբ դիտարկումների և ուսումնասիրությունների իրականացումը,
- 7) թափոնների և դրանց հեռացման վայրերի դիտարկումների և ուսումնասիրությունների իրականացումը, բացասական ազդեցությունների ներկայացումը,
- 8) բուսական ու կենդանական աշխարհի օբյեկտների տեսակների ու դրանց պոպուլյացիաների, համակեցությունների բազմազանության, ինչպես նաև դրանց տարածվածության, աճելավայրերի ու բնակության վայրերի և տեսակների գոյության համար առանձնահատուկ դեր խաղացող էկոհամակարգերի նկատմամբ դիտարկումների և ուսումնասիրությունների իրականացումը:

10. Իր առջև դրված խնդիրների կատարումն ապահովելու նպատակով կազմակերպությունն օրենքով սահմանված կարգով իրականացնում է հետևյալ գործառույթները՝

- 1) բնական միջավայրի՝ մթնոլորտի, ջրերի (այդ թվում՝ ստորերկրյա քաղցրահամ, հանքային և թերմալ), հողերի, կենսաբազմազանության, շրջակա միջավայրի օբյեկտների վրա ֆիզիկական, քիմիական և կենսաբանական ներգործությունների, աղտոտիչ նյութերի տարածման (այդ թվում՝ անդրսահմանային) ու դրանց հետևանքների դիտարկումներ, գնահատումներ և կանխատեսումներ,
- 2) մասնակցում է շրջակա միջավայրի վիճակի, դրա վրա ներգործության և հետևանքների մոնիթորինգի կազմակերպման, հանրապետության էկոլոգիական անվտանգության ապահովման, ինչպես նաև՝ թափոնների գործածության ոլորտի պետական քաղաքականության, հայեցակարգերի, ռազմավարությունների և

- դրանց կենսագործման համալիր և ճյուղային պետական և ազգային գործողությունների, ծրագրերի ու զեկույցների մշակմանն ու իրականացմանը,
- 3) ապահովում է շրջակա միջավայրի վրա ներգործության ու դրա հետևանքների, դիտարկումների, տվյալների կուտակման, պահպանման, մշակման, վերլուծության և տարածման մեթոդների, տեխնիկական միջոցների ու համակարգերի կատարելագործումն ու հուսալի աշխատանքը, ստացված տեղեկատվության հավաստիության անհրաժեշտ մակարդակը, ձեռնարկում է անհրաժեշտ միջոցներ այդ աշխատանքները միջազգային ստանդարտներին համապատասխանացնելու, բնագավառում ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման, մոնիթորինգի դիտացանցի և նյութատեխնիկական բազայի զարգացման ուղղությամբ,
 - 4) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է շրջակա միջավայրի մոնիթորինգի վերաբերյալ տվյալների կենտրոնացված հաշվառումը, մշակումը, կարգաբերումն ու տրամադրումը (կադաստրային շտեմարանի հետ կապված), ինչպես նաև՝ մոնիթորինգի արդյունքների վերաբերյալ կազմում է տեղեկագրեր,
 - 5) մասնակցում է շրջակա միջավայրի վրա ներգործության էկոլոգիական անվտանգության ապահովման իրավական, տնտեսական և վարչական մեխանիզմների, տեխնիկանորմատիվային և տեխնոլոգիական չափորոշիչների և չափաքանակների մշակման աշխատանքներին,
 - 6) մասնակցում է բնագավառին վերաբերող հանրապետական, տարածաշրջանային գիտահետազոտական և գիտափորձարարական ծրագրերի մշակմանը և այդ աշխատանքների իրականացմանը,
 - 7) կազմակերպում է մասնագիտական գիտելիքների ուսուցման, վերապատրաստման դասընթացներ, սեմինարներ և գիտաժողովներ՝ շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության հարցերի վերաբերյալ,
 - 8) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով մասնակցում է շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության միջազգային ու տարածաշրջանային համատեղ ծրագրերի իրականացմանը,
 - 9) հավաքագրում, մշակում, ամփոփում և արխիվացնում է բնապահպանական ոլորտի տեղեկատվությունը, դրա հիման վրա ստեղծում և վարում է բնապահպանական ոլորտի՝ շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների առանձին բաղադրիչների վերաբերյալ տվյալների շտեմարանները և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով այդ շտեմարաններում պարունակվող տեղեկատվությունները տրամադրում է պետական մարմիններին, հասարակական կազմակերպություններին և հասարակությանը,
 - 10) ստեղծում և վարում է միասնական բնապահպանական տեղեկատվական համակարգը (seis-պոռտալը),
 - 11) մասնակցում է տեղեկատվության փոխանակման գլոբալ և տարածաշրջանային միասնական համակարգերի ձևավորման ու զարգացման աշխատանքներին, օտարերկրյա պետությունների իրավաբանական և ֆիզիկական անձանց

սահմանված կարգով տրամադրում է տեղեկատվություն շրջակա միջավայրի մոնիթորինգի վերաբերյալ, իրականացնում է տեղեկատվության փոխանակություն օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ,

- 12) նախագծում և շահագործում է համակարգչային ցանցերը և կազմակերպում է համակարգչային ցանցից օգտվելու ուսուցումը,
- 13) ապահովում է փոխգործությունը նախարարության աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներում համակարգչային ցանցի շրջանակներում, ծրագրային ու տեխնիկական սպասարկումը, ինչպես նաև սպասարկման կարգով արտաքին տեղեկատվական ցանցերի հետ փոխգործության կազմակերպումը,
- 14) սպասարկում է նախարարության պաշտոնական կայքը, այդ թվում՝ նյութերի հավաքագրումը, ամփոփումը, մշակումը և տեղադրումը,
- 15) մասնակցում է թափոնների հաշվառմանը, թափոնների ըստ վտանգավորության և ըստ ոլորտների դասակարգման գործընթացներին,
- 16) հավաքում և մշակում է թափոնների գոյացման, վերամշակման ու օգտահանման օբյեկտների և հեռացման վայրերի մասին տեղեկատվությունը,
- 17) իրականացում է թափոնների հեռացման վայրերում տեղադրված թափոնների որակական ու քանակական վերլուծությունը և դրանց վնասակար ներգործության գնահատումը շրջակա միջավայրի վրա,
- 18) հավաքում և վերլուծում է թափոնների էկոլոգիապես անվտանգ ոչնչացման և վնասագերծման, ինչպես նաև սակավաթափոն և անթափոն տեխնոլոգիաների վերաբերյալ տեղեկատվությունը,
- 19) իր իրավասությունների սահմաններում իրականացում է միջազգային համագործակցություն:

11. Կազմակերպությունն իրականացնում է ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

- 1) թափոնների անձնագրերի կազմման վերաբերյալ տեղեկատվության և խորհրդատվության տրամադրում,
- 2) լաբորատոր հետազոտությունների և անալիզների իրականացում,
- 3) թափոնների գոյացման նորմատիվների և դրանց տեղադրման սահմանաքանակների նախագծերի մշակման վերաբերյալ տեղեկատվության և խորհրդատվության տրամադրում,
- 4) երկրաբանահետախուզական և հետազոտական գործունեության բնագավառում հետևյալ ծառայությունների մատուցում՝
 - ա. ուսումնասիրության և արդյունահանման նախագծերի կազմում,
 - բ. ստորերկրյա ջրերի հանքավայրերի երկրաբանաէկոլոգիական քարտեզների կազմում,
- 5) հիդրոերկրաբանական տեղեկատվությունների (խորհրդատվությունների) կազմում և տրամադրում,

- 6) ստորերկրյա ջրերի հանքավայրերի լուրջ կամ փոքր տեղամասերում սահմանափակ տեխնաժին գործունեների ազդեցության տակ ձևավորվող ստորերկրյա ջրերի ռեժիմի հատուկ դիտողական ցանցի դիտակետերում ջրերի քանակի և որակի ուսումնասիրությունների իրականացում,
 - 7) ստորերկրյա ջրերից ջրօգտագործողին հատկացվող ջրառի սահմանային մեծությունների և կեղտաջրերում պարունակվող վնասակար նյութերի թույլատրելի սահմանային արտահոսքի (ԹՍԱ) հաշվարկում,
 - 8) ջրառի և ԹՍԱ-ի հաշվարկների իրականացում,
 - 9) պետական ջրային կադաստրի ստորերկրյա ջրերի տեղեկատվության լիարժեքությանը, դրանց կառավարմանը և պահպանմանը նպաստելու նպատակով ստորերկրյա ջրաղբյուրների (հորատանցքեր, բնաղբյուրներ և այլն) անձնագրերի կազմում և տրամադրում,
 - 10) ստորերկրյա ջրերի շահագործվող հորատանցքերի մաքրման, կոնսերվացման և լիկվիդացման, նոր հորատանցքերի հորատման, հորատանցքերի ու բնաղբյուրների գույքագրման, ինչպես նաև դրանց շահագործական պաշարների գնահատման կամ վերագնահատման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում և աշխատանքների կատարում,
 - 11) սանիտարական խիստ պահպանման գոտիների նախագծման համար հիդրոերկրաբանական տեղեկատվությունների (խորհրդատվությունների) կազմում և տրամադրում,
 - 12) շրջակա միջավայրի օբյեկտների ու դրանց վրա ներգործությունների հետազոտությունների, ուսումնասիրությունների, մշակումների, ծրագրերի և ստեղծագործական աշխատանքների կազմակերպում ու իրականացում,
 - 13) շրջակա միջավայրի օբյեկտների ու դրանց վրա ներգործությունների, ինչպես նաև՝ թափոնների գործածության վերաբերյալ մասնագիտական գիտելիքների ուսուցում, վերապատրաստման դասընթացների կազմակերպում ու իրականացում,
 - 14) տեղեկատվության մատակարարման այլ գործունեություն,
 - 15) համակարգչային ու գրասենյակային տեխնիկայից օգտվելու և արդի տեղեկատվական տեխնոլոգիաների մասին իրազեկության բարձրացման նպատակով դասընթացների կազմակերպում,
 - 16) հրատարակչական գործ, այդ թվում՝ շրջակա միջավայրի ոլորտին վերաբերող տեղեկատվական նյութերի՝ գրքերի, բրոշյուրների, քարտեզների, ատլասների, պաստառների, կատալոգների, ծանուցագրերի վերարտադրում (հրատարակում, վերահրատարակում):
12. Պետական կազմակերպությունը լիցենզավորման ենթակա գործունեություն կարող է իրականացնել լիցենզիայի առկայության դեպքում:

III ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

13. Կազմակերպության կառավարումն իրականացնում են հիմնադիրը, նրա լիազորած պետական կառավարման մարմինը և գործադիր մարմինը՝ տնօրենը:

14. Կազմակերպության հիմնադիրն ունի կազմակերպության գործունեությանը և կառավարմանը վերաբերվող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:
15. Հիմնադրի բացառիկ լիազորությունները սահմանվում են «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:
16. Կազմակերպության ընդհանուր կառավարումը իրականացնում է Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարությունը, որպես ոլորտի կառավարման պետական լիազորված մարմին:
17. Պետական լիազորված մարմնի լիազորություններն են՝
- 1) կազմակերպության կառավարման համակարգի սահմանումը,
 - 2) կազմակերպության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը,
 - 3) կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնվող և/կամ ամրագրված պետությանը պատկանող գույքի կազմի հաստատումը.
 - 4) կազմակերպության կառավարման մարմինների ձևավորումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.
 - 5) կազմակերպության աշխատանքային ծրագրերի հաստատումը և գործունեության վերահսկողությունը,
 - 6) կազմակերպության գործադիր մարմնի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանների, հրահանգների, կարգադրությունների ու ցուցումների կասեցումը կամ դրանք ուժը կորցրած ճանաչումը,
 - 7) կազմակերպության գործունեության մասին հաշվետվությունների լսումը և դրա գործունեության վերստուգման արդյունքների քննարկումը,
 - 8) կազմակերպությանն ամրագրված պետական սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ վերահսկողության իրականացումը,
 - 9) կազմակերպության տարեկան հաշվետվությունների և հաշվեկշռի հաստատումը.
 - 10) կազմակերպության լուծարման հանձնաժողովի ստեղծումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը.
 - 11) կազմակերպության եկամուտների և ծախսերի նախահաշվի հաստատումը,
 - 12) «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, հիմնադրի որոշումներով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթների իրականացումը:
18. Կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է տնօրենը, որին պաշտոնի է նշանակում և ազատում լիազորված պետական մարմինը:
19. Կազմակերպության տնօրենն օրենքով, հիմնադրի և լիազորված մարմնի որոշումներով, սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է կազմակերպության գործունեությունը և կրում է պատասխանատվություն օրենքների, իրավական այլ ակտերի, հիմնադրի կամ

լիազորված պետական մարմնի որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

20. Կազմակերպության տնօրենի հետ կնքվում է պայմանագիր, որը հիմնադրի անունից ստորագրում է լիազորված պետական մարմնի ղեկավարը: Պայմանագրում սահմանվում են նրա իրավունքները, պարտականությունները, պատասխանատվությունը և փոխհարաբերությունները լիազորված պետական մարմնի, պետական կառավարման այլ մարմինների հետ, նրա աշխատանքի վարձատրության պայմանները, պայմանագրի դադարեցման օրենքով նախատեսված բոլոր հիմքերը և այլ դրույթներ, որոնք պայմանավորվող կողմերը կգտնեն անհրաժեշտ: Պայմանագրի դրույթները չեն կարող հակասել Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրության պահանջներին:

21. Տնօրենի պաշտոնում նշանակված անձը չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

22. Տնօրենի պաշտոնում նշանակված անձը գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով կազմակերպությանը և/կամ պետությանը պատճառած վնասի համար: Տնօրենի պաշտոնում նշանակված անձի լիազորությունների դադարեցումը հիմք չէ պատճառած վնասը հատուցելու պարտականությունները չկատարելու համար:

23. Տնօրենը պարտավոր է չկատարել հիմնադրի, լիազորված պետական մարմնի օրենսդրությանը հակասող որոշումները, կարգադրությունները, հրամանները, հրահանգները և դրանց չկատարման համար չի կարող ենթարկվել պատասխանատվության:

24. Տնօրենն իրականացնում է օրենսդրությամբ սահմանված և պայմանագրով իրեն տրված այլ լիազորություններ:

25. Տնօրենի բացակայության դեպքում, լիազորված պետական մարմնի գրավոր որոշման համաձայն այդ լիազորություններն իրականացնում է այլ անձ:

26. Տնօրենի տեղակալները պաշտոնի նշանակվում և պաշտոնից ազատվում են տնօրենի կողմից՝ լիազորված պետական մարմնի համաձայնությամբ:

27. Տնօրենը՝

- 1) առանց լիազորագրի հանդես է գալիս կազմակերպության անունից, ներկայացնում է նրա շահերը և կնքում է գործարքներ,
- 2) օրենսդրությամբ հիմնադրի և լիազորված պետական մարմնի որոշումներով և կազմակերպության կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները,
- 3) տալիս է կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր, նաև վերալիազորման իրավունքով լիազորագրեր,
- 4) սահմանում և հաստատում է կազմակերպության աշխատողների հաստիքացուցակը՝ համաձայնեցնելով լիազորված պետական մարմնի հետ, պայմանագրային հիմունքներով ընդունում աշխատողներ,
- 5) աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում է կազմակերպության աշխատակիցներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում է կարգապահական տույժեր,

- 6) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ,
- 7) սահմանում է կազմակերպության կառուցվածքը,
- 8) օրենքով և կազմակերպության կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,
- 9) ապահովում է կազմակերպության գործունեության վերաբերյալ համապատասխան հաշվետվությունների կազմումը և սահմանված կարգով ներկայացնում լիազորված պետական մարմինն,
- 10) իրականացնում է օրենսդրությանը չհակասող և կազմակերպության կառավարման այլ մարմիններին չվերապահված այլ լիազորություններ:

28. Կազմակերպությունն՝

- 1) ինքնուրույն է կազմակերպում իր գործունեությունը, իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ կնքում պայմանագրեր և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում որոշում է սպառողների պատվերներով և նրանց ֆինանսավորմամբ իր կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության սակագները,
- 2) հաշվապահական հաշվառումը վարում է «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, հաշվապահական ստանդարտներով և այլ իրավական ակտերով, սահմանված կարգով ներկայացնում է ֆինանսական և վիճակագրական հաշվետվություններ, հարկերը վճարում է ոչ առևտրային կազմակերպությունների համար օրենքով սահմանված կարգով ու դրույքաչափերով,
- 3) կրում է օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված այլ պարտականություններ:

29. Ծառայողական պարտականությունները կատարելու ժամանակ կազմակերպության աշխատակիցների առողջությանը և գույքին պատճառված վնասի հատուցումը կատարվում է օրենքով սահմանված կարգով:

IV ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

30. Կազմակերպությունն անհատույց և անժամկետ օգտագործման իրավունքով տիրապետում է իրեն հատկացված և ամրագրված գույքը:

31. Կազմակերպության ֆինանսական միջոցները գոյանում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեյի կողմից իրականացվող ֆինանսավորումից, միջազգային կազմակերպությունների հետ համատեղ իրականացվող աշխատանքների (ծրագրերի) միջոցներից, ինչպես նաև ձեռնարկատիրական գործունեության մատուցման դիմաց վճարումներից, հովանավորչական, նվիրատվական, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող այլ մուտքերից:

32. Կազմակերպության ձեռնարկատիրական գործունեության ընթացքում առաջացած շահույթը օգտագործվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով:

33. Կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, բանկային հաշիվներ Հայաստանի Հանրապետության արժույթով կամ արտարժույթով:

V. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՒՄԸ

34. Կազմակերպության գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում են հիմնադիրը, լիազորված պետական մարմինը, հիմնադրի կողմից լիազորված, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ պետական կառավարման մարմինները:

35. Կազմակերպությունը հիմնադրի կողմից սահմանված կարգով պարտավոր է հրապարակել իր տարեկան ֆինանսական հաշվետվությունը:

VI. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

36. Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել կամ լուծարվել հիմնադրի որոշմամբ և/կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: Կազմակերպության լուծարման դեպքում պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած գույքն ուղղվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

Հավելված N2
 Հայաստանի Հանրապետության
 բնապահպանության նախարարի
 2017 թվականի փետրվարի 21 -ի
 N 346 Ա հրամանի

**«Շրջակա միջավայրի մոնիտորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ին
 անհատույց օգտագործման իրավունքով հանձնվող գույքի կազմ**

ՀՀ դրամ

N	Անվանում	Ձեռքբերման տարեթիվը	քանակը	Սկզբնական արժեքը	Մաշվածություն	Մնացորդային արժեքը
1	Ծաղկաձորի կայան	2013	1	48908900	9781790	39127110
	Ընդամենը			48908900	9781790	39127110

**«Շրջակա միջավայրի մոնիտորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ին
սեփականության իրավունքով հանձնվող գույքի կազմ**

N	Անվանում	Ձեռքբերման տարեթիվը	քանակը	Սկզբնական արժեքը	«Ն դրամ	
					Մաշվածություն	Մնացորդային արժեքը
Մեքենաներ և սարքավորումներ						
1	Լաբորատոր դիտակայան ՊՈԱԿ - 1 լրակազ.	2004	1	1089365	1089365	0
2	Լաբորատոր դիտակայան ՊՈԱԿ - 1 լրակազ.	2004	1	1085520	1085520	0
3	Լաբորատոր դիտակայան ՊՈԱԿ - 1 լրակազ.	2004	1	1083136	1083136	0
5	Լաբորատոր դիտակայան ՊՈԱԿ - 1 առանց լրակազ.	2004	1	1063835	1063835	0
6	Լաբորատոր դիտակայան ՊՈԱԿ - 1 լրակազ.	2004	1	1066757	1066757	0
7	Լաբորատոր դիտակայան ՊՈԱԿ - 1 լրակազ.	2004	1	1065988	1065988	0
8	Լաբորատոր դիտակայան ՊՈԱԿ - 1 լրակազ.	2004	1	1067833	1067833	0
9	Լաբորատոր դիտակայան ՊՈԱԿ - 1 լրակազ.	2004	1	1063835	1063835	0
10	Լաբորատոր դիտակայան ՊՈԱԿ - 1 լրակազ.	2004	1	1090980	1090980	0
11	Լաբորատոր դիտակայան ՊՈԱԿ - 1 լրակազ.	2004	1	627888	627888	0
12	Լաբորատոր դիտակայան ՊՈԱԿ - 2 լրակազ.	2004	1	1282307	1282307	0
13	Լաբորատոր դիտակայան ՊՈԱԿ - 2 լրակազ.	2004	1	1427725	1427725	0
14	Լաբորատոր դիտակայան ՊՈԱԿ - 2 լրակազ.	2004	1	1364821	1364821	0
Տրանսպորտային միջոցներ						
15	Ավտոմեքենա 'ՎԱՁ 21214'	2004	1	3653998	3653998	0
16	Ավտոմեքենա. 'ՈՒԱՁ 3163-010'	2006	1	6238034	6238034	0
17	Ավտոմեքենա Նիվա	2012	1	5650000	2712000	2938000
18	ԼԱԴԱ ՎԱՁ 21214	2011թ.	1	5370000	4338960	1031040
19	ՆԻՍՍԱՆ ՍԵՆՏՐԱ	2015թ.	1	8477000	1017240	7459760
20	Ավտոմեքենա Ford Ranger	2010թ	1	16636520	13561447	3075072
21	Ավտոմեքենա Ford Ranger	2010թ	1	16636520	13561447	3075072
Արտադրական, տնտեսական գույք						
22	Քիմիական սեղան	2004	1	28000	28000	0
23	Քրոմոտոգրաֆ ՑՎԵՏ-500	2004	1	828136	828136	0
24	Քարշիչ պահարան	2004	3	332178	332178	0
25	Թերմոստատ SU-80U2	2004	1	32000	32000	0
26	Թերմոստատ սառնարան ԽՏ-8	2004	1	100000	100000	0
27	Համակարգիչ HP լրակազմով Սերվեր	2004	1	525000	525000	0

28	Կոմպրեսոր /փոքր/	2004	1	25000	25000	0
29	լթս	2004	1		0	0
30	Էլան 9000 մասսայեկտրոմետր # 9027804520 համակարգիչով. կոմպլեկտ պահեստամասերով	2004	1	71291552	71291552	0
31	Թրոլ 9000	2004	2	4069513	4069513	0
32	Թրոլ 9000-ի միկրոհամակարգիչ	2004	2	1398921	1398921	0
33	Էլջ Փի լազերջեթ 1200 տպիչ	2004	2	488116	488116	0
34	Էլջ Փի Սի 1000 UPS	2004	5	921800	921800	0
35	Լազերային տպիչ HP-1200	2004	1	312320	312320	0
36	UPS 4000W	2004	1	1101139	1101139	0
37	UPS 8000W	2004	1	2094947	2094947	0
38	Դեյլ օփթիկլեթս GX 260 P4 լրակազմով	2004	3	2431797	2431797	0
39	Ցանցային սերվեր LC	2004	1	1304815	1304815	0
40	UPS -1000	2004	1	201205	201205	0
41	100գ /410գ անալիտիկ կշեռք	2004	1	1195999	1195999	0
42	AS-93 պլոտ	2004	1	4321963	4321963	0
43	Սառեցուցիչ, 220V 50HZ ICP-MS-ի	2004	1	2447895	2447895	0
44	Նմուշի կոռոզիոնակայուն ներարկիչ	2004	1	2122456	2122456	0
45	Օդամղիչի հավաքակազմ	2005	2	1052898	1052898	0
46	<Bodtrak> / ԹԿՊ / դրոշելու սարք լրակազմով	2005	4	3614724	3614724	0
47	<infacal IR > հնֆրակարմիր պլատ.- անալիզատոր լրակազմով	2005	1	3888743	3888743	0
48	Ռինիվերսալ փոխարկմամբ էլեկտրասնուցման աղբյուր	2005	1	116604	116604	0
49	Ցենտրիֆուգ / Ջեներալ/ 240 լրակազմով	2005	1	949740	949740	0
50	Servel հեղուկ գազի էլեկտրական սառնարան	2005	2	1339780	1339780	0
51	Ռիլտրաձայնային մաքրիչ	2005	1	199231	199231	0
52	Հակադարձ օսմոսային ջրի զտման համակարգ,100/2470 Վ	2005	1	1498561	1498561	0
53	Ջրի զտիչի ջրային բաղնիքի սնուցիչ	2005	1	1528590	1528590	0
54	'Օհաուս Վոլեջեր" Անալիտիկ կշեռք, 200Վ	2005	1	1671805	1671805	0
55	ԹՔՊ ռեակտոր (ջերմային խուց) , 220Վ	2005	1	308952	308952	0
56	Սարք թթուների թորման կամ մաքրման համար	2005	2	7565563	7565563	0
57	Գրպանի պլոտորաչափական սարք	2005	2	535629	535629	0
58	Մրրկային խառնիչ,240Վ	2005	1	193954	193954	0
59	Փոցխային նմուշառման շերեփ, 18 ֆուտ	2005	1	317158	317158	0
60	Գարմին ԳԴՀ Մապ 76 GPS կոմպլեկտ լրակազմով	2005	1	140927	140927	0
61	Օդի-կոնդիցիոներ Panasonic CSMA 70/75 120-125/ CUMA լր.	2005	2	1661833	1661833	0
62	Գունաչափ / կոլորիմետր /DR 890	2005	3	1628500	1628500	0
63	Նավթամթերքների անալիզատոր	2005	3		0	0
64	Սառնարան պահարան	2005	2		0	0
65	Գազըրոմատոգրաֆ ESD լրակազմով	2005	1	29848210	29848210	0
66	Պատճենահանող սարք Xerox 420	2005	1	0	0	0
67	Համակարգիչ DELL P-4	2005	2	810599	810599	0
68	Լազերային տպիչ Լազեր Ջեթ 1200	2005	1	244058	244058	0
69	Սառնարան Hitachi	2006	2	247500	247500	0

70	Կոնդիցիոներ Samsung	2006	2	417000	417000	0
71	Անխափան սնուցման սարք	2006	2	105800	105800	0
72	Լազերային տպիչ	2006	1	85100	85100	0
73	Լաբորատոր կշեռք	2006	1	400000	400000	0
74	Հեռուստացույց LG	2007	1	140000	140000	0
75	Փոշու ավտոմատ անալիզատոր PQ 100	2007	1	4700000	3652025	1047975
76	Ազոտի օքսիդի ավտոմատ անալիզատոր APNA 360	2007	1	6700000	6700000	0
77	Ծծմբի օքսիդի ավտոմատ անալիզատոր APSA 360	2007	1	6400000	6400000	0
78	Ածուխի մոնօքսիդի ավտոմատ անալիզատոր APMA 360	2007	1	5200000	5200000	0
79	Մթնոլորտային պայմանների գրանցման սարք	2007	1	416650	416650	0
80	Համակարգիչ P-4 4600 լրակազմով	2008	1	200000	200000	0
81	Տվյալների գրանցման սարք GPRS/GPS	2008	2	1282000	1282000	0
82	Եզանակային պայմանների գրանցման սարք	2008	3	1578000	1578000	0
83	Մոնիտոր DELL LCD 17	2008	3	277500	277500	0
84	Համակարգիչ Core 2/800	2008	3	850800	850800	0
85	Անխափան սնուցման սարք UPS 800VA	2008	3	60000	60000	0
86	Սպեկտրոֆոտոմետր լրակազմով Շիմացու	2008	1	6870000	5338172	1531828
87	Գազային քրոմատոգրիչ լրակազմով Պերկին Էլմեր	2008	1	11800000	9168913	2631087
88	Ծծմբի երկօքսիդի SOX ավտոմատ անալիզատոր API 100E	2008	2	11945000	9281582	2663418
89	Ազոտի օքսիդների NOX ավտոմատ անալիզատոր API 200 E	2008	4	25345000	19693738	5651262
90	Ածխածնի մոնոքսիդի CO ավտոմատ անալիզատոր API 300EU	2008	5	27245000	21170089	6074911
91	Ջրի որակի չափիչ սարք YSI-556-01	2008	1	541118	541118	0
92	Ջրի որակի չափիչ սարք YSI-650-01	2008	1	429802	429802	0
93	Վոլտամպերմետրական վերլուծիչ 394/4/0	2008	1	6763398	6763398	0
94	Սպեկտրոֆոտոմետր Lambda 35 Պերկին Էլմեր	2008	1	4586550	4586550	0
95	Բազմապարամետր դաշտային չափիչ սարք	2008	1	531842	531842	0
96	Ջրի որակի չափիչ սարք 556 MPS	2008	1	540750	540750	0
97	Ջրի որակի չափիչ սարք լրակազմով	2008	1	355350	355350	0
98	Իոնային քրոմատոգրաֆի համակարգ /կոմպլեկտ/	2007	1	9599957	9599957	0
99	Ուլտրաձայնային վաննա B300VWR	2008	1	202550	202550	0
100	PH մետր (PHM 210)	2008	1	355350	355350	0
101	Կոնդուկտիվետր 8033 VWR	2008	1	319815	319815	0
102	Լազերային տպիչ	2008	1	33333	33333	0
103	Սառնարան WBM	2008	1	153000	153000	0
104	Թերմոպահարան ինկուբատոր	2008	1	735158	735158	0
105	Ամբերդի դիտակայան լրակազմով	2008	1	10524669	9244023	1280646
106	Բազմաֆունկցիոնալ գրասենյակային սարք	2008	1	139000	139000	0
107	Համակարգիչ Core 2 Puo	2009	2	472667	472667	0
108	Մոնիտոր DELL	2009	2	154167	154167	0
109	Կոմպրեսոր TONCTYI	2009	1	160000	160000	0
110	Օդափոխիչ D-9	2009	4	592000	592000	0
111	Կոնդիցիոներ BOSCH	2009	1	335321	335321	0
112	Ավտոմատ անալիզատոր CO	2009	1	5045000	5045000	0

113	Ավտոմատ անալիզատոր SO2	2009	4	22880000	14099328	8780672
114	Ավտոմատ անալիզատոր Nox	2009	2	11668000	11668000	0
115	Ավտոմատ անալիզատոր O3	2009	3	13167000	13167000	0
116	Օդի դիտակայան /կոնտեյներ/ լրակազմով	2010	2	5400000	3927689	1472311
117	Ավտոմատ անալիզատոր SO2X	2009	2	10170000	9458353	711647
118	Անդրադարձային մանրադիտակ- օպտիկա/optika Մանրադիտակ (Mod XDS3+Optikam Pro 3)	2010	1	1378854	1378627	227
119	Մանրադիտակ (ստանդարտ ձև)-Օպտիկա /optika Մանրադիտակ (Mod B600T+Optikam Pro 3)	2010	1	893353	893206	147
120	Մանրադիտակ (ստանդարտ ձև)-Օպտիկա /optika Մանրադիտակ (Mod SZM-2)	2010	1	326903	326903	0
121	Հատակային շերտիափոր նմուշահավաք ըստ էքման-Բըրջի/(Ekman -Birge-իդրոմար/idromar	2010	1	460286	460286	0
122	Կենսաբանական հատակափորիչ -իդրոմար/idromar	2010	1	551753	551753	0
123	Մարտկոցով էլ. ձկնորս- հանս գրանս MOD. IG200-2C	2010	1	1480179	1480179	0
124	Մեխանիկական շարժիչով էլեկտրական ձկնորս սարք-Հանս Գրասսել/HANS GRASSI GMBH/Mod EL 64II)	2010	1	3859373	3859373	0
125	Շարժական ճախարակ 100մ պարանով -իդրոմար/idromar	2010	1	994337	994337	0
126	Լազերային լոկատոր-Բուշնելլ/Bushnell(Mod 1500ARC)	2010	1	353477	353477	0
127	Շարժական թթվածնային չափիչ WTW(Mod OXI 340i)	2010	1	624336	624336	0
128	Շարժական pH չափիչ- WTW(Mod-pH340i)	2010	1	368229	368229	0
129	Հաղորդունակության/աղայնության շարժական չափիչ-WTW(Mod cond 340i)	2010	1	548803	548803	0
130	Աղտոտվածության շարժական չափիչ Հաննա/Hanna(Mod HI 98703)	2010	1	515168	515168	0
131	Բազմապարամետրային զննածող-Իդրոմար/Idromar	2010	1	8382506	8382506	0
132	UV-VIS սպեկտրոլուսաչափական համակարգ-Անալիտիկ ջենա/Analytik Jena (mod Specord 205 BU)	2010	1	5266141	5266141	0
133	Գազի խրոմատոգրաֆ-զանգվածի սպեկտրոմետր(GC-MS)WFD PS-ը մոնիտորինգի ենթարկելու և անհայտ օրգանական աղտոտիչները էկրանավորելու համար-Ագիլենտ/Agilent(mod. 7890A/5975C	2010	1	46772806	46772806	0
134	Միկրոալիքային յուրացման /մարսման համակարգ նմուշների պատրաստման համար-Բերգհոֆ/Berghof (Mod MWS-3+DAK-100)	2010	1	15409882	15409882	0
135	Ջրի մաքրման համակարգ լաբորատոր անալիզի համար-Միլիփոր/Milipore (Mod Elix3)	2010	1	1989773	1989773	0
136	Վակուումային պոմպով թաղանթի ֆիլտրացիայի համակարգ-Սարտորիուս/Sartorius (համակարգ)	2010	1	935324	935324	0
137	Արտաքին շարժիչով նավակ-Սելվամարին/Selvamarine(Mod PA360 ALL-Deinbio15)	2010	1	1354304	1354304	0
138	ԱՍՀ/GPS-GARMIN(Mod GPS MAP 60CSx)	2010	2	649128	649128	0
139	Սեղանի համակարգիչ տվյալների հավաքագրման և մուտքագրման համար-Չեյլ/DELL (Mod Optiolex 755DT)	2010	2	789567	789567	0
140	Լազերային տաիչ-Դեյլ/DEJ) (Mod 1720dn)	2010	2	338075	338075	0
141	Համակարգիչ տեղում տվյալների հավաքագրման և տողական գրասենյակներում տվյալների նախնական մուտքագրման համար (նոթբուկ/Notebook)- Դեյլ/Dell (Mod D531 AMD Athlon 64x2 Mobile TK-55-1000)	2010	1	374359	374359	0
142	Համակարգիչ Dual core 1,8 2կ-տ	2011	2	707081	707081	0
143	Մոնիտոր BENQ 17	2011	2	133400	133400	0
144	Անխափան սնուցման սարք UPS 600 վա	2011	2	44000	44000	0
145	Ավտոմատ անալիզատոր օրգանական և կարբոնատային ածխածին 1 լրակազմ	2011	1	30100000	26417956	3682044
146	Համակարգիչ P4 հավաքած	2012	1	290500	290500	0
147	HP P3500 համակարգիչ (QB299EA)	2012	1	415000	415000	0
148	Սեղան փոքր	2012	1	25000	25000	0
149	Երկտեղանոց բազմոց	2012	1	70000	70000	0

150	Լարրատոր սեղան	2012	9	250000	118772	131228
151	Արտադրական համակարգիչ	2012	10	3645000	3645000	0
152	Համակարգիչ Core i	2012	1	250000	250000	0
153	Համակարգիչ Intel Taguhi	2012	1	195000	195000	0
154	Համակարգիչ intel Celeron G550	2013	2	259000	259000	0
155	Բազմաֆունկցիոնալ սարք Cenon Pixma MP 230	2013	1	50580	50580	0
156	Մոնիտոր AOC 2043FS	2013	1	59000	59000	0
157	Համակարգիչ Intel Core լրակազմ,	2013	1	700000	700000	0
158	Համակարգիչ /Պրոցեսոր / Intel Geleron G550	2013	1	120000	120000	0
159	Canon Pixma MP 230 գունավոր տպիչ	2013	1	55000	55000	0
160	Canon MP 250 տպիչ	2013	1	26000	26000	0
161	Օդորակիչ	2013	1	188000	79860	108140
162	Օդորակիչ SATURN	2013	1	190000	80700	109300
163	Համակարգիչ Intel Geleron G550	2013	1	186000	186000	0
164	Հեռուստացույց Samsung LE 32E420	2013	1	158800	82570	76230
165	Համակարգիչ /Պրոցեսոր/	2013	1	119000	119000	0
166	Համակարգիչ Intel Geleron G550 լրակազմով	2013	1	230000	230000	0
167	Համակարգիչ intel Celeron G550	2013	1	119000	119000	0
168	Բազմաֆունկցիոնալ սարք Genon Pixma MG-2440	2014	1	24600	21410	3190
169	Մոնիտոր LED 19	2014	1	48000	40570	7430
170	Մոնիտոր LED 19	2014	1	48000	40570	7430
171	Բազմաֆունկցիոնալ սարք Genon Pixma MG-2440	2014	1	25200	20030	5170
172	Տպիչ HP CLJ pro 200M 251	2014	1	119700	89120	30580
173	Մոնիտոր LCD 19* LG	2014	1	50400	37520	12880
174	Գրասենյակային բազկաթոռ Atlantis	2014	1	115000	36100	78900
175	Մոնիտոր LED 21,5 Philips	2014	1	57000	38130	18870
176	Մոնիտոր LCD Acer V206HQL	2014	1	56100	44590	11510
177	Գրասենյակային աթոռ L 3516	2014	1	50000	15700	34300
178	Անխափան սնուցման սարք	2014	1	83500	60065	23435
179	Անխափան սնուցման սարք	2014	1	83500	60065	23435
180	Անխափան սնուցման սարք	2014	1	83500	60065	23435
181	Փոշեկուլ DS 6000 Mediclean	2014	1	182000	57160	124840
182	UPS 1200	2014	1	41500	29852	11648
183	Տաքացուցիչ	2014	1	35500	21300	14200
184	Յուղային Տաքացուցիչ	2014	1	32000	19200	12800
185	Զիրկիզվող պահարան	2015	1	100000	60000	40000
186	Համակարգիչ Case Copper	2015	1	276000	138000	138000
187	Հեռախոս	2015	1	5500	2750	2750
188	Վենտիլյատոր FS40Xp	2015	1	9500	4750	4750
189	Պրոցեսոր Intel Core i54460	2015	1	123800	61900	61900
190	Համակարգչի ստեղնաշար	2015	1	3190	1436	1755
191	Համակարգչի մկնիկ Genius	2015	3	7590	3416	4175
192	Նոութբուք	2015	1	0	0	0

193	Մոնիտոր Samsung	2015	1	48000	21600	26400
194	Համակարգչի ստեղնաշար Genius	2015	3	9570	4307	5264
195	Համակարգչի մկնիկ Genius	2015	2	5060	2024	3036
196	Վենտիլյատոր FS403R	2015	3	40500	16200	24300
197	Էլեկտրական ակուսիչ (դոել)	2015	1	39000	15600	23400
198	Հեռախոս	2015	2	12000	4800	7200
199	Յուդային Տաքացուցիչ	2015	1	35000	14000	21000
200	Համակարգչի մկնիկ	2015	1	3500	1400	2100
201	Հեռախոս	2015	1	12000	4800	7200
202	Համակարգչի ստեղնաշար GeniusKB-110 USB	2015	1	3190	1063	2127
203	Համակարգչի մկնիկ Genius DX -110	2015	2	5060	1687	3373
204	Էլ պլիտա յուդային	2016	1	28000	7778	20222
205	Գրասենյակային աթոռ	2016	1	45000	3281	41719
206	Գրասենյակային աթոռ	2016	1	46000	3354	42646
207	Դաշտային բազմապարամետր անալիզատոր	2016	1	1956000	122250	1833750
208	Հեռախոս	2016	1	6000	1000	5000
209	Դյուրակիր համակարգիչ LENOVO	2016	1	175000	29166	145834
210	Մայր սալիկ ASUS Z-97-K	2016	1	65000	10833	54167
211	Ջրի թորման սարք	2016	1	250000	34722	215278
212	Խստոնիչ	2016	1	35100	7313	27788
213	Մագնիսական խստոնիչ	2016	1	3000	625	2375
214	Գրասենյակային աթոռ	2016	1	24000	1250	22750
215	Պրոցեսոր Պ4 Celeron	2016	1	95000	13194	81806
216	Մկնիկ Genius DX-110 USB	2016	1	2940	408	2532
217	Համակարգիչ	2016	1	130000	10833	119167
218	Գրասենյակային աթոռ	2016	1	35000	1094	33906
219	Գրասենյակային աթոռ	2016	1	30000	938	29063
220	Համակարգչի ստեղնաշար GeniusKB-110 USB	2016	1	4400	244	4156
221	Համակարգչի մկնիկ Genius DX -110	2016	2	5000	278	4722
222	Կոնտեյներ ջերմամեկուսիչ /Դիտակայան Ալավերդի/	2016	1	750000	15625	734375
223	Կազմման սարք	2016	1	65000	3611	61389
224	Համակարգչի մկնիկ GeniusNetscrol	2016	1	2000	111	1889
225	Սառնարան SHARP	2016	1	169700	3535	166165
226	Համակարգչի ստեղնաշար GeniusKB-110 USB	2016	1	4400	0	4400
227	Մկնիկ Genius DX-110 USB	2016	1	2500	0	2500
228	Գրասեղան	2005թ	2	132000	132000	
229	Բազկաթոռ	2005թ	8	144000	144000	
230	Համակարգչային քարթիջ	2005թ	2	67680	67680	
231	Չիրկիզվող պահարան	2006թ	1	36000	36000	
232	Համակարգիչ P-4 3.0 GHZ VC 128 MB	2006թ	1	340000	340000	
233	Սկաներ Mustek Skan Express	2006թ	1	101200	101200	
234	Անխափան սնուցման սարք E-pro 1200VA	2006թ	1	52900	52900	
235	Մոնիտոր Sony 17 LCD	2006թ	1	197800	197800	

236	Գրասենյակային պահարան	2006թ	2	111560	111560	
237	Ֆաքս PanasonicKX-FP218UA	2007թ	1	92100	92100	
238	Համակարգիչ (նոթ բուք)	2009թ.	1	305400	305400	
239	Համակարգիչ 1-CRU Core 2DUO	2009թ.	3	870000	870000	
240	Անխափան սնուցման սարք USBAPS500VA	2009թ.	3	105000	105000	
241	Հոսանքի կարգավորիչ10/100 8port	2009թ.	1	11700	11700	
242	Մոնիտոր LG19	2009թ.	3	327000	327000	
243	Տպիչ HP LJ CP 1215	2009թ.	1	135000	135000	
244	Տպիչ CanonLPB3010	2009թ.	2	114000	114000	
245	Տպիչ HP1005	2010թ.	1	60000	60000	
246	Հոսանքի ԱԱԱ Mercury 600VA	2010թ.	2	39000	39000	
247	Համակարգիչ E5200	2010թ.	2	284000	284000	
248	ՄանիտորLGw1942s	2010թ.	2	136000	136000	
249	Բջջային հեռախոս	2010թ.	1	92000	92000	
250	Օդորակիչ Samsung AQ24CAN	2010թ.	1	372400	264554	107846
251	Մետաղական վինտիլատոր	2010թ.	1	91000	91000	
252	Թվային ֆոտոխցիկ Canon SD1400	2010թ.	1	149000	149000	
253	Սառնարան	2011թ.	1	240000	240000	
254	Գազային քրոմատոգրաֆ մատչելիությունով GCMS-QP2010SE EI 230V CE LV incl.GC-2010 Plus, արտադրությունը՝ SHIMADZU CORPORATION (Ճապոնիա),	2013թ.	1	58502000		58502000
255	Բազկաթոռ	2015թ.	6	108000	12960	95040
256	Սառնարան DAEWOOD 093	2015թ.	1	79000	9750	69250
257	Ջրի սառացուցիչ BERG 19HC	2015թ.	1	65900	7908	57992
258	LCDLED հեռուստացույց BERG 32D303	2015թ.	1	136000	16320	119680
259	օդակարգավորիչ SATURN	2015թ.	2	498000	59760	438240
260	Բազկաթոռ	2015թ.	1	70000	8340	61660
261	Գրասեղան օֆիսային	2015թ.	1	210000	25200	184800
262	Բազմոց փոքր	2015թ.	1	220000	26400	193600
263	Չգետապահարան	2015թ.	1	120000	14400	105600
264	Աթոռ կիսափափուկ, կահույքի	2015թ.	6	120000	14400	105600
265	Գրապահարան	2015թ.	2	75000	9000	66000
266	Գրասենյակի դարակաշար	2015թ.	4	140000	16800	123200
267	Բազմաֆունկցիոնալ տպիչ սարք CENON MF 3010	2016թ.	1	65000	7800	57200
268	Գրասեղան	2016թ.	1	28000	3360	24640
269	Մետաղյա պահարան	2016թ.	1	83000	9960	73040
270	Օդակարգավորիչ Aukia	2016թ.	2	248000	29760	218240
271	Մոնիտոր LG	2016թ.	1	89100	26730	62370
272	Համակարգիչ INTEL	2016թ.	1	152200	45660	106540
273	Դյուրակիր համակարգիչ LENOVO	2016թ.	1	269100	80730	188370
274	Գրասեղան	2016թ.	1	33000	3960	29040
275	Միկրոցենտրիֆուգ	2011թ.	1			
276	Մաքուր օդի գեներատոր	2011թ.	1			
277	Թորիչ(դիսցիլատոր)	2011թ.	1			
278	Կրկնակի թորիչ	2011թ.	1			

279	Չորապահարան	2011թ.	1			
280	Ռոտացիոն գոլորշացուցիչ	2011թ.	1			
281	Լուծահանման սոքսլետ սարք 4 հատանոց	2011թ.	1			
282	Թրծատուփավոր(մուֆերային) վառարան	2011թ.	1			
283	Թափահարիչ	2011թ.	1			
284	Աղաց փոքր	2011թ.	1			
285	Մաղերի հավաքածուով մանրացուցիչ	2011թ.	1			
286	Անալիտիկ կշեռք	2011թ.	1			
287	Լաբորատոր կշեռք	2011թ.	1			
288	Մանրաբեկումաչափ (ռեֆրակտոմետր)	2011թ.	1			
289	Ջրածնային գեներատոր	2011թ.	1			
290	Ազոտային գեներատոր	2011թ.	1			
291	Լաբորատոր ապակե ամանեղեն	2011թ.				
292	Սպեկտալուսաչափ UV-VIS	2011թ.	1			
293	Տրանսֆորմատային յուղի նմուշի հետազոտման սարք՝ քլորի իոնների հայտնաբերման համար	2011թ.	1			
294	Կրկնակի վաճարան 127 x 75 x 90	2011թ.	1			
295	Քիմիական սեղան կերամիկական ծածկով 120 x 60 x 90	2011թ.	4			
296	Քիմիական սեղան կերամիկական ծածկով 90 x 60 x 90	2011թ.	2			
297	Սեղանի հենակ120 x 35 x170	2011թ.	2			
298	Սեղանի հենակ90 x 35 x170	2011թ.	2			
299	Օդաքաշ պահարան120 x 75 x 225	2011թ.	2			
300	Քիմիական ամանեղենի պահարան 90x 50 x 200	2011թ.	2			
301	Զգեստապահարան 90x 60 x 200 չափերի	2011թ.	1			
302	Կշեռքի սեղան 70x 60 x75	2011թ.	1			
303	Գրասեղան	2011թ.	1			
304	Քրոմոտոգրաֆի սեղան 150 x 87 x 80	2011թ.	1			
305	Անխափան էլեկտրասնուցման սարք	2011թ.	1			
306	Գազային ազոտի բալոն	2011թ.	1			
307	Գազային հեղիումի բալոն	2011թ.	1			
308	Գրքեր /գրադարան/	1997		189311	189311	0
309	Մետաղական պահարան	1994	1	231	231	0
310	Շերտավարագույր /քառ.մ/	3729	22	82112	82112	0
311	Գրասենյակային աթոռ	2006	10	110000	110000	0
312	Համակարգչային սեղան	2006	8	217200	217200	0
313	Աստիճան	2007	1	84000	84000	0
314	Սառնարան 7600	2007	1	189504	189504	0
315	Օդափոխիչ SC-1177	2007	1	312132	312132	0
316	Հեռախոս Nokia 2610	2008	1	33000	33000	0
317	Ձայնային կոմպլեկտ	2007	1	162500	162500	0
318	Ապակեփայտեթ /քառ. մ/	2008	33,3	300000	300000	0
319	Միջնորմ /քառ. մ/	2008	8	300000	300000	0
320	Դուռ, սիջնորմ /քառ. մ/	2008	9,4	300000	300000	0

321	Համակարգիչ P4	2008	1	102000	102000	0
322	Ցանցային գործիք	2008	1	13500	13500	0
323	Էլեկտրական դռել	2008	1	20000	20000	0
324	Շերտավարագույր /քառ.մ/	2008	65,7	197100	197100	0
325	Monitor Samsung	2008	2	90000	90000	0
326	Ապակեփաթեթ /քառ. մ/	2008	5,2	100000	100000	0
327	Ապակեփաթեթ /քառ. մ/	2008	6	100000	100000	0
328	Հեռախոս Panasonic KX-TG5200	2008	1	13475	13475	0
329	Printer Laser Jet 1600	2009	1	124000	124000	0
330	Պտտատակահան Ինտեռնոլ 780վ.	2009	1	23500	23500	0
331	Printer HP Desk Jet D 2563	2009	1	20520	20520	0
332	Monitor Philips	2014	1	46000	30666	15334
333	Monitor Philips	2014	1	62000	41333	20667
334	Հեռախոս Panasonic KX-TG 1313	2014	1	31500	24500	7000
335	Տպիչ Epson L110	2015	1	116100	70950	45150
336	Համակարգիչ Dual Core	2015	1	125000	41667	83333
337	Ցանցային բաժանարար (Սվիչ D-link DGS-1024A)	2015	1	58000	19333	38667
338	Համակարգիչ Core i 3	2016	1	185000	46250	138750
339	Բազկաթոռ	2016	1	65000	9750	55250
340	Monitor- 17	2003	1	95845	95845	0
341	Ֆաքսիմիլային ապարատ „Panasonic,,	2005	1	97000	97000	0
342	Լազրային ապարատ Lazerjet-6L	2005	1	95000	95000	0
343	Մոնիտոր-Viev Sonie GJOfm	2005	1	189250	189250	0
344	Համակարգիչ P4 2.GHz,Intel chipset,800 FSB HDD 120GB, RAM 512MB, Video card 128MB, FDD, DVD-RW, Modem external, KB, Mous	2005	1	487670	487670	0
345	Թվային ֆոտոապարատ HP Photo Smart 945	2005	1	263550	263550	0
346	Սկաներ Mastek scan Express	2005	1	108040	108040	0
347	Թվային տեսախցիկ SONY DCR-DVDZE	2006	1	565500	565500	0
348	Համակարգիչ P4 2.66Ghz/915 Intel chipset/VGA64 MB on board/800 FSB/HDD160GB/RAM1024 MB/FDD/NIC/CD-RW/DVD/KB, Mouse	2006	1	305300	305300	0
349	Մոնիտոր LCD Orange 17"	2006	1	156550	156550	0
350	Մոնիտոր LCD Acer 19"	2006	1	184000	184000	0
351	Համակարգիչ P-4 3,2 GHz Video card 256 MB	2006	1	492800	492800	0
352	Կոնդիցիոներ LG LS-S12LH	2007	2	645000	645000	0
353	Սկաներ Մաստեք U3	2007	1	95000	95000	0
354	Համակարգիչ P4 P4 3.2GHz,945 Intel chipset,1066FSB HDD SATA 250GB, RAM 1024 MB, Video card SVGA PCI exp. 256MB,FDD,CD-RW/DVD, Modem Internal, KB, Modem	2007	2	778500	778500	0
355	Մոնիտոր Ֆիլիփս 17" ԼՍԴ	2007	2	285200	285200	0
356	Սեղան	2007	5	350000	350000	0
357	Սեղան համակարգչի	2007	15	495000	495000	0
358	Գրապահարան	2007	5	310000	310000	0
359	Ավտոմատ հեռախոսակայան	2009թ	1	52838	49755	3083
360	Համակարգիչ CPU 4,306	2009թ	1	320190	315178	5012
361	Մոնիտոր	2009թ	1	111150	109409	1741
362	Մոնիտոր SAMSUNG 19 943NWX	2010թ	1	60833	59881	952

363	Համակարգիչ CPU HDD/RAM/DVD-RW	2010թ	1	244300	226098	18202
364	Մոնիտոր SAMSUNG 19LCD	2010թ	1	63375	58654	4721
365	Համակ. դիրքավ. Համակարգ GPS ETREX	2010թ	1	114167	99375	14792
366	Ուտրաձայնային ջրաչափ D3	2011թ	1	600000	499646	100354
367	Համակարգիչ Dual Core E5500	2011թ	2	195833	163079	32754
368	Մոնիտոր Samsung B2030	2011թ	2	108333	90214	18119
369	Տպիչ Samsung ML-1660	2011թ	1	31666	26369	5297
370	Ֆոտոսպարատ CANON	2011թ	1	65833	54822	11011
371	Համակարգիչ G620	2013թ	2	275000	208960	66040
372	Համակար. էկրան 19LED LG	2013թ	2	108000	82064	25936
373	Տպիչ Canon PSC LAZER Base	2006թ	1	85000	66243	18757
374	iPAD APPLE	2013թ	1	295000	224157	70843
375	Բջջային հեռախոս Samsung DOUS	2013թ	1	129000	95509	33491
376	Պատճենահանման սարք Samsung ML2160	2013թ	1	39000	28875	10125
377	Համակարգիչ	2013թ	1	143000	89964	53036
378	LG Մոնիտոր 24MN	2013թ	1	96000	60395	35605
379	Համակարգիչ PC INTEL G3220	2014թ	1	115834	54462	61372
380	Անվտանգության համակարգի հավաքածու	2014թ	1	63500	15437	48063
381	Երկաթե պահարան	2015թ	1	56000	13614	42386
382	Եվրոդոներ սպիտակ	2015թ	1	133326	32405	100921
383	Օդակարգավորիչ RECKE	2015թ	2	281666	36616	245050
384	Օդարակիչ BK22A090	2015թ	1	112500	14625	97875
385	Սառնարան NeoBC51BA	2015թ	1	48750	6337	42413
386	Գրապահարան	2009թ	2	31934	28342	3592
387	Սեղան դարակով	2010թ	2	91668	66463	25205
388	Սեղան մենեջերի	2010թ	1	58333	43262	15071
389	Պահարան մեծ	2010թ	1	100000	68161	31839
390	Պահարան փոքր	2010թ	2	40000	27265	12735
391	Պահարան մեծ	2010թ	1	75000	51121	23879
392	Ղեկավարի սեղան	2011թ	1	91667	58502	33165
393	Աշխատանքային սեղան	2011թ	2	141668	90412	51256
394	Սեղանի կոմպլեկտ	2011թ	1	66666	42506	24160
395	Փոքր պահարան	2011թ	2	41666	26592	15074
396	Պահարան	2011թ	1	20833	12267	8566
397	Պահարան	2011թ	1	16666	9814	6852
398	Սեղան դարակով	2011թ	2	100000	58886	41114
399	Սեղան դարակով	2011թ	2	105000	61831	43169
400	Կցասեղան	2011թ	2	28333	16684	11649
401	Բազկաթոռ	2011թ	2	86000	50642	35358
402	Գրասենյակային աթոռ	2011թ	1	34000	20021	13979
403	Բազկաթոռ	2011թ	3	129000	75963	53037
404	Բազկաթոռ	2011թ	1	43000	22910	20090
405	Բազկաթոռ	2012թ	1	36000	18125	17875

406	Փոքր պահարան	2013թ	1	25000	11806	13194	
407	Փոքր պահարան	2013թ	1	18000	8501	9499	
408	Սեղան դարակով	2013թ	1	80000	37781	42219	
409	Կցասեղան	2013թ	1	70000	33058	36942	
410	Դիմադիր	2013թ	1	30000	14168	15832	
411	Սեղան դարակ	2013թ	4	160000	64048	95952	
412	Աթոռ	2014թ	6	72000	28822	43178	
413	Կաշվից աթոռ	2014թ	1	79000	17822	61178	
414	Կցասեղան900*450*650	2014թ	1	20833	4700	16133	
415	Պահարան 180*800*400	2014թ	1	62500	14100	48400	
416	Դիմադիր սեղան 1100*500	2014թ	1	20833	4700	16133	
417	Գզրոց	2014թ	1	25000	5640	19360	
418	Զգեստապահարան	2014թ	1	29167	6580	22587	
419	Փոքր պահարան առանց դռների	2014թ	1	12500	2820	9680	
420	Բազկաթոռ	2016թ	1	50000	6000	44000	
421	Ձմեռային բաճկոն	2010թ	3	39000	38164	836	
422	Ձմեռային բաճկոն	2010թ	4	64000	61806	2194	
423	Կիսաբաճկոն	2010թ	3	33000	31869	1131	
424	Տաբատ	2010թ	3	21000	20280	720	
425	Տաբատ	2010թ	4	32000	30903	1097	
426	Բանվորական կոշիկ	2010թ	4	42000	40560	1440	
427	Բանվորական կոշիկ	2010թ	3	33750	32593	1157	
428	Երկարաճիտ ուտիլիտե կոշիկ	2010թ	4	15000	14486	514	
429	Ձմեռային բաճկոն	2014թ	9	117000	93600	23400	
430	Ձմեռային տաբատ	2015թ	9	72000	57600	14400	
431	Կիսաբաճկոն	2014թ	9	82503	66003	16500	
432	Կոշիկ	2014թ	9	72000	57600	14400	
433	Բաճկոն	2016թ	6	67500	0	67500	
434	Կիսաբաճկոն	2016թ	6	48000	0	48000	
435	Ուլտրաձայնային դյուրատար ջրի հոսանքաչափ	2016թ	2	1991638	0	3983276	
436	Հիդրոլոգիական բազմաֆունկցիոնալ սարք SOUNST 9100	2016թ	1	1738281	0	1738281	
437	STS GOLD Ջրի ծախսաչափ SIMENS	2016թ	1	3746475	0	3746475	
			ԸՆԴԱՄԵՆԸ	612	680806732	551580650	131217719